

եւ բազումք եւս 'ի Պատրիարքաց 'ի կենդանութեան իւրեանց հաճութեամբ միաբանաց յանձնէին զայն իշխանութիւն այլում, հաստատեալ օրինօք դատարանի. այլ այս եւս իբրեւ գործ վնասակար խափանեցաւ յետոյ :

Իսկ 'ի վերջին ժամանակս՝ յետ սահմանելոյ զերիս Կանոն, առաւել ուշ դնէր ազգն՝ ընտրել զարժանաւորս եւ զվկայեալս՝ հմուտ աստուածային գրոց եւ կրօնական ուսմանց, վարժ եւ կիրթ յամենայն գործս Աթոռոյն, ծանօթ բարուց եւ քաղաքականութեան օտարաց, տեղեակ եկեղեցական բարեկարգութեանց, արթուն եւ անբասիր արտաքին եւ ներքին իրողութեանց Աթոռոյն :

Եւ զի դահակալք Աթոռոյն ոչ կարէին այնուհետեւ խոտորիլ 'ի շաւղաց նախնի Հարց, եւ խախտել մասամբ իւրիք զկանոնս եւ զեղեալ կարգս վանականութեան՝ եւ ոչ ըստ կամս վարել զգործ տնտեսութեան, աչառութեամբ եւ զրկողութեամբ պառակտել զմիաբանսն, այլ իբրեւ հայր գթած հաւասար ունէին խնամս 'ի վերայ ամենեցուն, եւ յօղիւ սիրոյ եւ խաղաղութեան կապեալ ընդ միաբանակից եղբարս, աջակցութեամբ նոցին՝ գործէին արթուն մտօք եւ հասուն խորհրդով 'ի շինութիւն Աթոռոյն եւ 'ի միութարութիւն ազգին, ժառանգ թողլով զառաքինութիւնս եւ զբարեգործութիւնս յաջորդաց իւրեանց, զի ապագայ պատմութիւնն բարւոք ընտրէ զգործս իւրաքանչիւրոց :



Գ Լ Ո Ւ Խ Բ .

Նորոգութիւն տաճարի Ս. Յակոբայ : Սեղբոս Ամիրս եւ բարեգործութիւնք նորին : Այլազգիք Սխմի :

ՅՈՎՀԱՆՆԷՍ Պատրիարք Կոստանդինուպօլսի տնտեսեալ 'ի թախանձանաց եւ 'ի հարկեցուցիչ բանից մտերմին իւրոյ Գրիգորի Պատրիարքի՝ եհան հրաման արքունուստ վասն նորոգութեան եկեղեցւոյն Ս. Յակոբայ (1727). եւ առաքեաց զհրովարտակն 'ի ձեռն Ակնցի Սեղբոս Ամիրայի, որ 'ի սմին ժամանակի դէպ եղեւ նմա գնալ յերուսաղէմ